

խակ եկեղեցու հայաթում աղքատներ, որքան կա-
մանա...

Աղքատութիւն փողի, աղքատութիւն հացի, աղ-
քատութիւն ընդհանուր շահերը մտածող մարդ-
կանց, աղքատութիւն կանոնաւոր դպրոցի և
խղճատու, փոքր ի շատե իր պաշտօնին տեղեակ
ուսուցիչների և ընդհանրապէս եսակամութեամբ,
ստանաւորութեամբ, կրթով, պարագայութիւնով և
անգործութեամբ առատ ու հարուստ է Նու-
խին:

Քաղաքի բարեկամութեան, ուսումնարանի յա-
ւաքովութեան, հասարակական շահերի համար
նոյն անտարբերութիւնը ու ստանաւորութիւնը
կը տեսնել, ինչ որ տեսած կը լինէր մի 10 տա-
րի առաջ: Գոնէ առաջ մի եռանդուն կամարական
մի հոգաբարձ Սկիւիեան, մի հասարակութեան յոր-
դորով Մակեդոնակի ու խաղաղութեանը էլ կային,
այժմ նրանց նմանները հրազով որոնեա, չես գըտ-
նի:

Գու մեր տէր Կ-ին պիտի տեսնէր աւելի կեղ-
տոտ հագուստով և բնութագրաբար բնի ու մո-
րուքով, տէր Մ-ին աւելի աչքածակ ու աչքակապ
աւելի շատախօս կամ դատարկախօս (զիմու չո-
գուց), տէր Ս-ին աւելի փոփոխելի, կեղծաւոր ու
չորհրդով, տէր միւս Մ-ին աւելի անաւոր ու զո-
րաւոր նոր ստացած խաչ ու շղթայով, իսկ խեղճ
ծերունի տէր Ս-ին խաղաղ ծերացած, անաստամ ու
անձայն և իր հաւատարմութիւններով փաղուց դե-
րեզման ձգված:

Գուցէ նոր բան, որ դու չես տեսած լինի, այդ
մեր կրկու բուրձարներն են, բայց կը կը գնա-
կը տեսնես որ նրանց միջի նստաբանները մի
քանիսը կողքի վրա թեքված, մի քանիսն են է
ոտները կողքը, միւսները առանց թիկունքի
լըլըլըլըլըլը, օրորելիս, մնացածներն էլ ներկը
համալուց ռանգները թաւած, դեռ չեմ ասում
ջրարդիւ խողովակների կտորոված լինելու ու փը
չովիւր, անշուքութեանը ծառերի չորանալը... այո՛,
դու եթէ մի անգամ տեսնես, երկրորդ անգամ
տեսնես, երրորդ անգամ չես գնայ սիրտը արեւ-
րեցնելու:

—Այս ռոմ ժամանակն է շինվել և ինչու պիտի
այսպէս անխնամ է, կը հարցնես դու:

—Նախկին գաւառապետ Բուրգանովսկու օրով
է շինվել, կը պատասխանեն քեզ, բայց արիւստ,
այժման մեր գաւառապետը այս մասին հող չի
տանում, կը շարունակեն նոքա, Բուրգանովսկու
ժամանակ ռոմ էր տեսել մեր փողոցները կեղտոտ
էս նախ, փողոցները նա ուղղեց, Նուխուց մին-
չե Զարթաթալու տանանը նա խճուղի շինեց, լապ-
տերները փողոցներում նրա օրով անկվեցան, արի-
ստ, նրա քանդակը յետ բոլորն էլ հետգնեմէ քանդ-
վում են:

Գուցէ իբրեւ նոր բան դու կը տեսնես մեր 10-ը
12 ֆայեռները, որոնք դեռ ևս չապրկվեան
համար են ծառայում մեզանում, որոնց մէջ նրա-
տողների թիֆլիսական կինոյութիւնները միւր
հայ և թուրք երիտասարդների կողմից լուսաւորու-
թիւն է համարվում:

Իսկ քո տեսած դարձա՞նտ նեխած ու փտած
դարձա՞նտ, նոյն քաղաքի կենտրոնում, նոյն
Քիչի-չայ գետի մասին անհոգութիւնը մինչև այժմ,
քեզ առ ցոյց կը տան միւս բաների հետ թէ Նու-
խին այս տարը տարվայ մէջ որքան յառաջադի-
մութիւն է արել, թէ որքան նուխեցին իր օգուտը
ճանաչել է...

Բան է, եթէ ճանապարհը Նուխով ընկնէր, քեզ
խորհրդով կը տայի Նուխու մէջ ոտը չը դնել,
որովհետև ամեն քաղաքապետը տեսածները քո
սիրտը կը ցտակեցնեն:

2.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ՀԱՅԿԱՅ» լրագիրը հաղորդում է որ պ. Պաթ
հրաւիրեց այս տարի իր ուսուցչ զերասանական
խմբի համար պ. Ստրիկովի և տիկին Ալեկսէ-
վային, որոնք արդէն այս օրերս հասան թիֆլիս:
Իսկ սեպտեմբերին կը դայ այստեղ, որպէս զերա-
սանուհի, թիֆլիսցիներին լաւ ծանօթ տիկին Գլե-
բովա:

ԱՌԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ մեզ դուռն են որ օգոստոսի
13-ին հայ թատրոնականները ներկայացրին Ախա-
ղաքաբում Սուրբաբեկի «Պէպո» Պէպոյան,
թագուտ հայ չքաւոր ուսանողներին: Նոյն տեղից
մեզ դուռն են որ բոլիւ Ա. Բարսեղեան այցելեց
Ախաղաքաբում, բայց չը կարողացաւ դասախոսու-
թիւն անել այդ քաղաքում, որովհետև չապարկ էր

դէպի Ալեքսանդրապոլ: Թղթակիցը յոյս է յայտ-
նում որ վերադարձին նա Ախաղաքաբում դասա-
խոսութիւն կը կարգայ:

Մեր մշտական թղթակիցը ԱՌԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
հաղորդում է մեզ որ օգոստոսի 13-ին անցյալ
գործը մտնելով մի այստեղի ընտելի տուն, նրա
բացակայութեան ժամանակ, գործը կը նրա
անից 1000 բուրգ: Զարգացողները դեռ ևս գտնված
չեն: Երկու քաղաքի միջև — ՍԵԼ և Նուխով գետի

Կիրակի, օգոստոսի 19-ին Արժուհու թատրո-
նում հայ սիրողները ներկայացրին առկին: Սաղա-
քին «Մի թաւ թէյ», «Նոր ընտելարան» և «Հեղի
նէի» որս: Վարդանիւրը: Սաղաքիցիները մինը, պ-
Տէր—Գաւթեան, անցյալ պատճառով ներկայաց-
ման երեկոյն չեկաւ թատրոն, այնպէս որ ներ-
կայացումն քիչ էր մնում, յետ էր պցկում: Բայց
պիեսաներից մինում բացակայ խաղացողի
դերը յանձն առաւ և կատարեց պ. Յ. Տէր-Գրիգոր-
եան, իսկ միւսում պ. Մ. Մամեան: Այսպիսով
ներկայացումն կայացաւ: «Հեղինէի» որս» պիեսան
շատ թող անցաւ, բայց «Նոր ընտելարան» մէջ,
չը նայելով որ պ. Տէր-Գրիգորեան բոլորովին ան-
պատրաստ էր, այնու ամենայնիւ դուրս բերեց
իր դերը: Տիկին Տէր-Գրիգորեան—Պաշայեանի երգը
շատ գեղեցիկ էր: Մենք չենք ցանկանում երկար
խօսել այդ ներկայացման մասին, բայց խորհուրդ
կը տայինք սիրողներին դանաղան կրքերի ասպա-
րէշ չը դարձնել թատրոնական բեմը: Եւ առհա-
սարակ բաւական է արդէն միմիայն վարդանիւրով
գրաւով: Եթէ երկուստեք սիրողները կամենում
են շարունակել իրանց ներկայացումները, մենք
նրանց խորհուրդ կը տայինք այժմ պատրաստել
մի ամբողջ և ծանր պիես:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պոլիս 28 յուլիս

Վաղուց է որ պատեական «Մշակի» շնամկ
մը դրած էին ի հարկէ ձեր լրագիրը առանձին
պէտք չունի իմ թղթակցութիւններու մէջ, երբ
որ Հայկակի պէս եռանդուն և խելացի նամակա-
ցիւր մը ունի: Բայց նա կը գրէ ընթացող անց-
քերուն վրա, իսկ ևս այս նամակաւ կը փորձեմ
ձեր ընթերցողներուն կարճատև կերպիւ ընդհա-
նուր նկարագիր մը տալ Կ. Պոլսի կենտրոն մասին:

Թուրքաց մայրաքաղաքի հայերը հետզհետէ կը
կորսնցնեն իրենց առաջկայ նշանակութիւնը, որ
պէս գումարատէրեր և այդ նշանակութիւնը կան-
ցին յունաց ձեռքը, քանզի հայերը միշտ կը ըլ-
րաղէին կապաղաւորութեամբ, տէրութեան քօմի-
սիօնէրութեամբ և երբէք ձեռնամուխ եղած չեն
իսկական վաճառականութեան, երբէք պարագած
չեն ճշմարիտ արդիւնաբերութեամբ: Ուստի հայե-
րու առևտրական գործունէութիւնը անհաստատ
հողին վրա կայանալով, երբ տէրութեան ֆինան-
սական ճգնաժամը հասաւ, հայերն ալ իրենց օղա-
լին հարստութեամբ զորեկեցան անդունդի մէջ,
իսկ յոյները ստացան վաճառականների իսկական
նշանակութիւնը, վասն զի նրանց առևտրական գոր-
ծունէութիւնը տէրութեան հովանաւորութիւնէն
ազատ, բռնած ունէր հիմնաւոր, հաստատ և միան-
գամայն անկախ դիրք:

Ոչ թէ միայն վաճառականութեան մէջ, բայց
և հաւարական գործունէութեան ուրիշ ճիւղե-
րուն մէջ Կ. Պոլսից հայերու յատկանիւն է ան-
հաստատ և ժամանակաւոր ընթացքը: Ի՞նչ է, օրի-
նակ, Կ. Պոլսից հայոց մամուլը: Գուցէ ամբողջ Կ.
Պոլսից հայոց մամուլի խմբագրատեղեւորութիւնը մէջ չէ-
ք գտնել բարձրագոյն ուսում ստացած անձ մը: Միակ
խմբագիր, որ եւրօպայի, գլխաւորապէս Ֆրանսիոյ
ուսման ճաչակ առած է, դա «Մասիս» խմբագիրն
է: Նա ալ շատ անհաստատ համոզմանց տէր
մարդ է, երբէք քաջութեամբ և վստահութեամբ
չը պաշտպաներ իր հասարակական կամ քաղա-
քական գաղափարները: Միշտ կը վախճայ այս
կամ այն երեւոյթին վրա իր սեփական դատողու-
թիւն տալու, անդադար կը հակառակ ինքն իրեն:
Հակառակութիւններ, անհաստատ և չափէ դուրս
զգոյշ ընթացք «Մասիս» յատկանիւն է: Նրա
զգոյշ, և եթէ կրնայ ըսուիլ, կառավարութեան առջև
հըռ, ոտրակալող ընթացքին տանադրեղ ապա-
ցոյցը այն իրողութիւնը կրնայ լինել, որ քան և
ուշ տարիէ ի վեր որ այս լրագիրը կը հրատա-
րակվի, երբէք խափանված չէ եղեր տէրութեան

ձեռքով, երբէք նկատողութիւն մը ընդունած չէ
տէրութիւնէ... Միթէ քան և ուրի տարվան մի-
ջոցին մէջ առկի յերկայացած չէ «Մասիս» ար-
դարացի ցատումն մը արտայայտել տէրութեան
այս կամ այն դատապարտել ընթացքին դէմ...

Առհասարակ յարձակողական մեթոդը լրագիր-
ներու մէջ մեզ մօտ յայտնի չէ և ոչ ալ կրնայ
լինել, վասն զի մեր բոլոր խմբագրատեղեւոր
իրենց բաժանորդներէն նիւթական կախումն ու-
նեն և երբէք չեն համարձակվիլ խոտութեամբ
քննադատել հայոց հասարակութեան պակասու-
թիւնները:

Բացի «Մասիս» խմբագրատեղեւոր, հայոց լրագիր
ոչ մի ալ խմբագիր մի ու է կանոնաւոր ուսում
ստացած չէ: «Մանդուկի» խմբագիր խմբ-
ագիրը մի բոլորովին ազատ, գրեթէ անգրագէտ
անձ է, որ ոչ մի կրթութիւն չունի, բայց ունի
քնական ուշիմութիւն, վառ ազգային զգացումներ
և ինչ կը գրէ՝ աւելի բնագրամբ կը գրէ, քան
թէ երկար խորհեցն վերջ: Սա է պատճառ որ
իրեն անունը օրէցօր կընկնի հասարակական
կարծիքին մէջ:

Մեր մնացած բոլոր ազգային խմբագրատեղեւորները
միմիայն ազգային ստորին վարժարաններու մէջ
ուսած են. այդ է իրենց ամբողջ ուսումը:

Եւ ճշմարիտ դժուար է պատկերել որ մեր հա-
սարակութիւնը բարձրագոյն ուսմամբ կրթվի Տաճ-
կաստանի պէս երկրի մը մէջ, ուր չի կայ և ոչ
մի բարձրագոյն դպրոց: Կան ճշմարիտ է, Կ. Պոլ-
սի մէջ արքունի քանի մը բարձրագոյն բուսած
դպրոցներ, որպէս և մեր գլխաւորական և ըլ-
րժկական դպրոցը և նա հաշակաւոր լինէ ըսված
դպրոցը, ուր բոլոր առարկաները ֆրանսիական
լեզուով կաւանդվին: Բժշկական դպրոցին մէջ
առարկաները կաւանդվին տաճկաց լեզուով, բայց
ինչպէս, — սասն և հինգ տարիէ ի վեր ֆրանսիա-
կան բժշկական դպրոցէ թարգմանված ձեռնարկ-
ներին օգնութեամբ: Տէրութիւնը կը կարծէր որ
բժշկական գիտութիւնը առաջադիմութիւն չունի,
և սասն և հինգ տարիէ ի վեր թարգմանված
բժշկական գրքերը կրնան պիտանի լինել և այսօր,
մինչ զի յայտնի է որ ոչ մի արհեստ այդքան ա-
ռաջադիմութիւն ըրած չէ վերջին քան տարվան
միջոցին, որքան բժշկական արհեստը:

Ինչքան բարձր է արքունի գլխաւորական դպրո-
ցին մէջ ուսումը նրանք կրնաք հետեցնել, որ
երբ լինէ ըսված դպրոցէն ֆրանսիական ուսու-
ցիչները քաջկեցան և իրենց տեղ նշանակվեցան
որպէս ուսուցիչներ գլխաւորական արքունի դպ-
րոց, տաճկաց état-major կազմող օֆիսիներ,
լինէ ևս հայ աշակերտ մը դասախօսութեան ատեն
վէճ մը բացեց ուսումնական տանի օֆիսիէ մը
հետ և պաշտօնեց նա մը որ մաթէմատիկային մէջ
բան մը չը հասկնար: Քանի մը օրէն վերջ դա-
սաւորն ստիպվեցաւ հրաժարական տալ իր
պաշտօնէն...

Կը տեսնէք, ուրեմն, ինչ են մեր բարձրագոյն
դպրոցները: Այժմ լինէ ըսված մեր Կ. Պոլսի
միակ բարձրագոյն դպրոցը կատարեալ անկման մէջ
է և կը կարծեն որ չուտով գոցվելու է:

Ան այն պետութիւնը որ կուզէ սասմանա-
դրական լինել և որ չունի ոչ ժողովրդական ու-
սում, ոչ ալ բարձրագոյն կրթութեան մի օրինաւոր
դպրոց անգամ: Այդ դպրոցներուն բարձրա-
գոյն կուզվիլ կատարեալ ծաղի է գիտութեան
վրա...

Պարզ է, ուրեմն, որ ամբողջ Կ. Պոլսի և ամ-
բողջ Տաճկաստանին մէջ չի կայ բարձրագոյն ու-
սում, և եթէ կան կրթեալ երիտասարդներ, որոնց
խմբեր կը գործեն այլ և այլ ազգային ընկերու-
թիւններու մէջ, սղա միմիայն ինքնակրթի, ինք-
նուս անձներ են, որոնք յայտնի առիճանի մը ազ-
գային ստոր դպրոցներու մէջ ուսումը առնելէն
վերջ, շարունակած են իրենց ինքնակրթութիւնը
գրեթէ ընթերցանութեամբ, շնորով օտար լե-
զուներ, մանաւանդ ֆրանսիականի հմտութեան:
Նոյն միջոցաւ, այսինքն ինքնակրթութեամբ, ի
հարկէ, անհմարն է մասնագիտութիւն մը ուսա-
նիլ, այլ միայն ընդհանուր կրթութիւն մը սեփա-
կանիլ, վասն զի մասնագիտութեան մը համար,
անհրաժեշտ են և բարձրագոյն մասնագիտական
(special) դպրոցներ: Պարտի մը ըսել, որ տէրութեան
համար աշխատողներ, արքունի դպրոցներու համար
մասնագիտական ձեռնարկներ ֆրանսիական լեզուէ
ի տաճկական թարգմանողներ, միշտ եղած են
հայեր, մանաւանդ քաթուղիկ հայեր:

Առհասարակ ինքնակրթութեամբ զարգացած
անձներ կան Կ. Պոլսից, հայերու մէջ, բայց ոչ
մի ինքնուրոյն, originalité ունեցող անձ մը չի կայ:
Բոլոր մեր հասարակական գործողները, մանաւանդ
մեր ազգային մամուլին մէջ, ստրկաբար կը հե-
տեն մի անգամ գծադրված, հնացած մտաւոր
ակտի մը:

Նորեք եկած էր Կ. Պոլիս ձեր տիկինների մի

հայ դերասան, պ. Չմէկեան, մեր հայոց դերասան-
ներէ և դերասանուհիներէ քանի մի անձինք Տիֆ-
լիս հայոց բեմին համար հրաւիրելու նպատակաւ:
Նա արդէն ուղևորված է դէպի Արմիա, իր հետ
տանկով մեր միակ տաղանդաւոր դերասան, պ.
Աղամեան և երկու այլ դերասանուհի: Տիֆլիսցի
հայերն կը կարծեն որ Կ. Պոլսից հայոց բեմը ծաղ-
կեալ դրութեան մէջ է, բայց բնաւ չեն գիտեր թէ
արդէն երկու տարիէն աւելի է, որ Կ. Պոլսից
հայերն հայոց բեմէն հայոց բառ անգամ լսած
չեն: Վաթնուներորդ թվականներու մէջ, այս
հայոց բեմը ծաղկեալ դրութեան մէջ էր, երբ բե-
մին համար կը գործէին Ռուսինեանի, Թղևանի,
Թէրեցեանի, Բէշիկթաշեանի և Հաքիմեանի պէս
ընդունակ գործեր, բայց այն օրէն երբ վարդա-
վանի պէս մի շահաւոր մարդու ձեռքն ընկաւ
հայոց թատրոնի արհեստը, հայ դերասանները և
դերասանուհիները տեսան թէ դրամ վատանիլ
աւելի դիւրին է տաճկական բարբառով ներկայա-
ցումներ տալով և այս րոպէիս բոլորն ալ տաճկա-
կան լեզուով կը խաղան: Հայոց թատրոնական
արհեստ բնաւ չի կայ Կ. Պոլսից մէջ, բոլորն ալ
բացի ֆրանսիական ողբերգութիւնէ և կատակեր-
գութիւնէ, տաճկական լեզուով, մանաւանդ
լըկօգի և Ռֆէսպախի օրեր երեք տներ կը ներկա-
յայեն, ուր արհեստ ըսված ի դուր կը փնտռելը,
և ուր հասարակութիւնը կեղծայ ոչ թէ բարձր և
ազնիւ բեմական արհեստին հետ ծանօթանալու
դատաւորութեամբ, այլ միմիայն գեղեցիկ ոտներու
և կարճ jump-ներու համար... Ան ալ կըսեն, որ
Կ. Պոլսից հայ հասարակութեան կրթեալ, intelli-
gent մարդ պէտք չունի հայոց թատրոնի: Երբ
կրթեալ հայ ընտանիքն մը կուզէ թատրոնական
ազնիւ արհեստ վայելել, նա իրեն արժանաւորու-
թիւն ստոր կը համարի հայ բեմ գեղարուեստա-
կան գաղափարներն առնելու, այլ իրենց ֆրան-
սիական թատրոն, ուր կը գտնի կատարեալ վայել-
չութիւն ֆրանսիական ողբերգութեան մը կամ
կատակերգութեան մը ներկայացմանը հանդիսա-
տես լինելով:

Ի.

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 օգոստոսի: «Прав.
Вѣстн.» հաղորդում է որ Թագաւոր Վայր
ուղևորվեց Ս. Պետերբուրգից օգոստոսի 15-16
գիշերը, ժամը 12-ին դէպի Վարշա-
վա, իսկ 16-ին հասաւ Դինաբուրգ, ուր և
գորահանդէս արաւ: Յետոյ ուղևորվեց դէպի
Վիլնա, ուր հասաւ 17-ին օգոստոսի: Ամեն
տեղ ժողովուրդը տոնախմբութեան մէջ էր և
ողևորութեան ընդունում էր Թագաւորին:
Վիեննայ-նահանգապետ Նոյնստիպի Հեազորում
է ներքին գործերի միւնիստր Մալովին, Նիժ-
նի-Նովոգորոլից, որ 16-ին օգոստոսի, դիշեր
ժամանակ, Նոյնստիպիական զուգի գորա-
նցի վեր յարկը այրվեց: Վերջն ժամանակ-
ները տոնախմբաւոր մէջ կային հրդէհների մի
քանի աննշան դէպքեր, բայց կրակը իտիյն
հանգրդին: «Прав. Вѣстн.» լրագիրը հրա-
տարակց կառավարութեան հետեւալ հա-
ղորդութիւնը: Ուսումը պարբերական հրա-
տարակութեան մի մասը, վերջին ժամանակ-
ները առանձին ուղագրութիւն դարձնելով
օտար պետութիւնների ներքին կենսի վրա,
և յափշտակվելով այդ դէպքում օտար մա-
մուլի մտածելու եղանակով, որ Ուսումնային
և նրա քաղաքականութեան վերաբերութեամբ
թշնամական և մինչև անվայելութիւն խիստ
ձեւով է խօսում, նոյն ծայրահեղութեան է
հասնում: Զարմանալի դատողութիւնները
մեր մամուլի այս կամ այն պետութեան մէջ
յարուցվող լեղրերների վերաբերութեամբ և
նրանց արտաքին քաղաքականութեան փոփո-
խութեան մասին շատ անգամ տպագրական
խօսքի գեղձման են հասնում: Նրա դատա-
ղութիւնները օտար տէրութիւնների և նր-
անց ղեկավարների մասին անցնում են հա-
մեսութեան սահմանից և կառավարութիւ-
նը մամուլի այդ տեսակ արամաւորութեանը
վճռողապէս իր տհաճութիւնը տալով գրու-
նում է նրան անհամաձայն այն բարեկամա-
կան յարաբերութիւնների հետ, որ մենք
ոչնչեք դէպի օտար պետութիւնները և ան-
համաձայն մամուլի իր ազգապիտան պար-
տաւորութիւնների վրա ունեցած հայեացքի
հետ:

Խմբագիր—հասարակելի ԳԵՐԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

